ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Անգլիայում եկեղեցու ընկերվարական—տնտեսական գործին մասնակցելու խնդիրն առաջ եկաւ երկրում գոյութիւն ունեցող բանւորական ճգնաժամի շնորհիւ, որի հետևանքն էր աշխատանքից դուրկ ահագին խմբերի գոյութիւնը, որոնք մեծ հոգածութիւն պատճառեցին պարլամէնտական գործիչներին և քրիստոնէական ընկերվարական միութեան: Անգլիական եկեղեցին գիտակցում է իւր պարտականութիւնը՝ միացնելու իւր աշխատանքը չարիքը մէջտեղից վերացնելու համար և ինչպէս բացատրում է «Church Times», դրա համար լաւագոյն միջոց է համարում ազդել առանձին անհատների խղճի վրայ, կոչ անել չարիքի դէմ մաքառելու, մի խօսքով՝ քարոզել սոցիալական գործունէութեան իդէալը և յիշեցնել հասարակութեան, որ չի կարելի ոչ մի մարդու յանձնել իրեն ճակատագրին:

—Հասկանալու համար, թէ անգլիական հոգևորականութիւնը ինչպէս է գործադրում քրիստոնէական ընդհանուր սկզբունքները ժամանակակից սոցիալական տնտեսական խնդիրներում, բաւական է առաջ բերել մի խումբ հոգևորականների յայտարարութիւնը Զեմբերլէնի անտէր երկիրների յափշտակութեան և գանձարանի շահերի պաշտպանութեան ծրագիրների դէմ: Այդ յայտարարութեան տակ ստորագրող անձինք ուշադրութեան են առնում մտադրուած բարեփոխութեան բարոյական կազմը և որպէս «ազգային խղճի պատասխանատու» անձինք, իրենց իրաւունք են համարում յայտնել իրենց դիտողութիւնները այդ մասին: Նրանք բողոքում են Մեծ Բրիտանիայում հովանաւորող կարգերի (պրոտէկցիոնիզմի) դէմ, որովհետև, ինչքան էլ անկեղծ և հայրենասիրական լինին նրա պաշտպանների միտումները, այնուամենայնիւ նրանք առաջ են բերում այնպիսի դրդող պատճառներ և տրամադրութիւններ, որոնց դէմ իրանք սովորաբար բողոքել են որպէս անբարոյական երևոյթների դէմ:

Մասնաւորապէս մատնանիշ են անում այն հանգամանքը, որ նա սատկացնում է ազգերի միջի բաժանումն, տանում դէպի կաշառակերութիւն, մենաւաճառութիւն և օգտակար է հանդիսանում մի միայն զօրաւորների համար: